ԱԶԱՏՆ ՇՈՒՇԻ

կամ Ի՞ՆՉ ԵՆ ՂՈՂԱՆՋՈՒՄ ԶԱՆԳԵՐԸ

Վերջապե՜ս, վերջապես կատարվեց հայ մարդու նվիրական բաղձանքներից մեկը. ազատն Շուշին ու նրա հալածական տերը գտան միմյանց, և աշխարհն իր բազմադարյան պատմության մեջ ևս մեկ անգամ ըմբոշխնեց արդարության համը: Վերջապես հայ մարդը կարող է ոտք դնել Շուշի, համբուրել Ղազանչեցոց եկեղեցու քարը, համբացած եկեղեցին վերստին կարող է խոսել իր հարազատ լեզվով, իր սուրբ գմբեթի տակ հավաքել իր հալածական գառներին:

Հիշում եմ՝ արցախցի բանաստեղծ Բոգդան Ջանյանը մեկուկես տարի առաջ գրել էր՝ «Շուշին է՞լ դարձավ Վան» և դառն վիշտ էր հայտնել, որ երևի իրեն էլ բախտ չի վիճակվի ոտք դնելու հայրենի քաղաքը:

Շուշին ազատվեց կապանքներից:

Շուշին վերադարձավ հայրենի տուն:

Շուշին այսուհետ կլցվի հայ օրորոցներով:

Այդ մեծ ու բախտավոր իրողության առթիվ շնորհավորենք հայ ժողովրդին, բոլոր հայերին՝ առանձին-առանձին, բոլոր շուշեցիներին՝ առանձին-առանձին, նաև Բոգդան Ջանյանին, մեր զավակներին ու նրանց զավակներին: Ապա դառնանք ու համբուրենք հայ ազատամարտիկների ճակատը, օրհնենք ու փառաբանենք այն արծիվ տղաներին, որ գնացին տանկ ու գրադի դեմ, գնացին, որովհետև առջևում Շուշին էր:

Դեպի Շուշի տանող հայրենիքի փրկության և ազատության ճանապարհին տվեցինք թանկագին զոհեր: Նրանք հավերժ ապրելու են ժողովրդի երախտապարտ հիշողության մեջ: Շուշիի բոլոր ազատարարների անունները մեկ առ մեկ գրվելու են հայ ժողովրդի պատմության մեջ:

Այժմ նորից դառնանք Ազատն Քաղաքին: Եթե հազար կտրիճներով վերցրինք Շուշին, բյուր հազար հերոսներ են պետք այն հավիտենից պաշտպանելու համար: Շուշիի համար ոչ միայն Շուշիում, այլ ամենքը և՛ ամենքս, և՛ ամենուր պետք է պայքարենք, պայքարենք միասնությամբ, միակամությամբ, պայքարենք և՛ հաստոցի առաջ, և՛ լսարանում, և՛ ածուներում, և՛ մեր վարք ու բարքերի մեջ՝ փողոցում ու տանը: Մեր յուրաքանչյուր քայլ, եթե չի նպաստում Շուշին անառիկ դարձնելուն, ինչ-որ տեղ դավաճանություն է և՛ մեզ, և՛ մեր անցյալին, և՛ մեր դեռ չծնված թոռներին:

Շուշին պիտի պահենք դաժանությամբ ու գուրգուրանքով, ինչպես մայիսի 8-ին: Երբեք ու երիցս մի մոռացեք՝ թե ի՞նչ է ուսուցանում Ղուրանը. ստուգիր, եթե հարևանդ ինչպես հարկն է չի սիրում ու պաշտում իր հողը, խլի՛ր նրանից:

Իսկ այն, ինչ քոնն է եղել վաղնջական ժամանակներից ու Ղուրանի ծննդից էլ առաջ, պարտավոր ես եռակի ջանք ու կորովով պաշտպանել, ինչպես արեցիր դու մայիսի 8-ին:

Արցախը Ադրբեջանի համար սոսկ տարածք է, Շուշին՝ սոսկ քաղաք, իսկ մեզ համար միմիայն գոյության իմաստ: Արցախը և Շուշին պետք է ամրացնել զորքով, զենքով, դիվանագիտությամբ՝ այնպես, որ ոչ թե մենք մտահոգվենք, թե՝ ինչ կարող են անել նրանք, այլ նրանք մտահոգվեն, ինչ կարող ենք անել մենք: Նժարները շարժվել են, ով չհապաղեց՝ նա՛ է շահում, պահը աստեղային է:

Արցախը հազարամյակներով եղել է ազատ և անկախ, հայ ու հայեցի: Արցախը չի խոնարհվել թշնամու առաջ, եղել է հայոց պետականության միջնաբերդը: Միայն մեկ անգամ, 1923-ին խորհրդային իշխանությունը խաբեությամբ Արցախը սկուտեղի վրա մատուցեց Ադրբեջանին: Յոթանասուն տարի ներսից ու դրսից արնածոր արին նրան: Փառք Աստծո, այսօրվա սերունդը Արցախը դուրս քաշեց գիլյոտինի տակից:

Այսօր Շուշիում հնչում է հայոց պատարագը: Արցախը ուժ է հավաքում, իսկ ազատագրված Շուշին այդ ուժը քառապատկում է: Հայոց անկախության միջնաբերդը թևակոխում է նոր հազարամյակ, ազգային իղձերի հազարամյակ: Առանց Շուշիի Հայաստան չկա: Կլինի հայ ժողովուրդը, ուրեմն, կլինի՛ նաև Շուշին, ի հեճուկս այսօրվա և բոլոր ժամանակների թշնամիների:

Պատվական ՇԱՔԱՐՅԱՆ